



Հայագետ գրող Է. Տեղալի

գործերով, իմաստուն վարդապետութեանց լուսով, բանաստեղծութեան արծաթուն բոցերով:

Ուրիշ Հաւաքածոյի մը մէջ, Նուիրուած Վ. Բելլիսիի ծննդեան հարիւրամեկին, զետեղեցի Բոհեմիայէն եկած ժողովրդական երգիկ մը: Հեզիկ ու բարեպաշտիկ բառեր կան մէջը՝ որ վանքի հրնչիւններուն հետ աններդաշնակութիւն չեն կազմեր. կ'ուզեմ անոնց արձագանգը պահել: Է. Տեղալի

ՅՈՒՐԵԼԵԱՆՆԵՐ



ՊՐՈՑ. ՏԵՂԱՅԻ ՅԻՍՆԱՄԵԱԿ

Իրրև հայագէտ և իրը թղթակից «Բազմավէպի» ծանօթ է Ուսուցչապետ Է. Տեղալի անունը՝ մեր պատուական ընթերցողներուն:

Հայկական ուսումնասիրութեամբ և հայ ազգով զբաղող Եւրոպացիները՝ սիրելի են մեզի հայու չափ. և անոնց կեանքի մանրամասնութիւնը հետաքրքրական պիտի ըլլան բոլոր մեր ազգայնոց:

Մայիսի կիսուն Պատուան իր յարգանքները և համակրութիւնը ծրարեց ոսկեղէն մետալիոնի մը մէջ և Նուիրեց զայն իր պատկառելի ուսուցչապետին՝ Է. Տեղալի՝ անոր յիսնամեայ Ոսկեղէն Յորելեանին տոթիւ:

Այդ համակրական ցոյցերուն դիմաց, ծափահարութեանց մէջ մենք հայրս՝ զբարթ հպարտութիւն մը կը զգանք, քանի որ զիտենք թէ Յորելեարը իր այդ յիսուն տարուան կեանքին մէջ զբաղած է նաև հայ գրականութեամբ և հայ կեանքով:

Մինչդեռ Պատուան իր Ուսուցչապետին յիսնամեայ յորելեանը կը տօնէ, մենք միևնոյն ժամանակ կրնանք Հայագէտ Ուսուցչապետ Տեղալի քառասնամեակը տօնել. վասն զի նա առաջին անգամ 1869ին

սա իրաւունք ունենայ ամօթահար շիկնեցնելու զայն, յանցանքն իմա է, որ այլ ևս չեմ զգար այն վատուուն զեղեցկութիւնը որ մեր ժողովուրդն ունի: Իմ նախընտրած չափերէն մին՝ բանաստեղծին ուզածը չէ, սակայն թարգմանչին բմահանոյցը եպերելի չէ: Վերջատանջներուն երդաշնակութիւնը, որ մեր քով անսովոր են, հաճելի էին Յոյներուն. ինչպէս նաև ութհարիւրի մեծ բանաստեղծներէն մէկուն, Մուխրընի. հակիրճ գրութեանց մէջ կրնան գոհացնել թէ՛ գրողն և թէ՛ ընթերցողը:

Պետեօֆիի ստանաւորներուն վրայ քանի մը խօսք ալ ինծմէ աւելցուցի: Գիտենք՝ թէ պատերազմի մէջ անյայտացած այս դիւցազին այրին՝ շուտով նոր ամուսին գտաւ. սակայն կախարդանքը, որ կայ բոլոր ճշմարիտ բանաստեղծից մէջ, չզօրեց՝ կարողալու համար զայն պապայայն մէջ: Արդարև լացող հայրենիքը միտքաբուսած է ճշմարիտ բարեկամներէ, վեհանձն

հրատարակած է իր հայկական անդրանիկ ուսումնասիրութիւնը¹ :

1869էն աստին մտաւորապէս յիսունէն վաթսուն գրքոյկներ հրատարակած է Ուսուցչապետ Տեզան ի նպաստ հայ բանասիրութեան, հայ գրականութեան և հայ դատին :

Ուսուցչապետին հայկական ուսումնասիրութեանց նիւթ մատակարարած են Ազաթանգեղոս, Նեմեսիոսի Հայկական թարգմանութիւնը, Եղիշէի Վարդանանց պատմութիւնը, Հայ-Վենետիկ, Հայաստանը, Ս. Քրիստափորը հայկական թարգմանութեան մէջ, Հայ ճանապարհորդ մը (Թովմաս Եթովպացին), Հ. Ալիշանը, Գր. Աղթամարցոյ իմ այգիի տաղը, Հ. Բ. Սարգիսեանի Եւազրի հրատարակութիւնը, Զօպանեանը և այլն : Վերջերս հրատարակեց նաև Հ. Ա. Ղազիկեանի Ենէպկանի թարգմանութեան և Հայ Ժամագրքին վրայ ըրած բանախօսութիւնները :

Ու հայասէր Յորելեարը ամենայն սիրով յանձն առաւ աշխատակցելի «Գեղու» նի»ի՝ նկատելով որ իր աշակերտութեամբ կը նպաստէր նաև հայ որբիկներու :

Վստահ ըլլալով որ հայ ազգը ունի իր սրտին մէջ այն զգացումները ինչ որ մենք՝ ղէպ ի ուսուցչապետը, կը համարձակինք ամբողջ ազգի մը անկեղծ զգացումներուն թարգմանն ըլլալ, մաղթելով իրեն իր գործունէութեան Աղամանդեայ Յորելեանը : Անկեղծ մաղթանքներ են որ կ'ուղղուին հայ սրտերէն ղէպ ի Յարզոյ Յորելեարը, վասն զի ինքը գրեթէ միակն է իտալիոյ մէջ՝ որ պիտի շարունակէ թարգմանն ըլլալ հայկական գրական նորութեանց, հայկական տառապանքին :

ԱԼ. ՄԱՏՈՒՐԵԱՆԻ 25ԱՄԵԱԿԸ

Մեր հայ գրագէտներուն համար ամենէն քաջալերիչ և միանգամայն միտթարիչ հանդէսն է Յորելեանը : Ընդհանրա-

բապէս հայ գրականութեան և գեղարուեստին նուիրուողները նիւթապէս կը տան ջուին իրենց ասպարէզին մէջ, այդ՝ իրեն պատճառ ունի մեր ազգին յետաձայնութիւնը գեղարուեստին մէջ. մեր մէջ գրագէտ մը իր գործերը հրատարակելու համար՝ պէտք է անօթի մնայ, իսկ Եւրոպիոյ մէջ պէտք է վարձատրուի : Անօթի մնած են գրեթէ բոլոր հայ գրագէտները՝ Պարոնեանէն սկսեալ մինչև Աղամեան :

Լաւ որ սակայն մեր ուսանայ եղբայրները գէթ յորելեանով մը՝ վարդենի մը կը տնկեն փուշերու մէջէն 25 կամ 30 տարի քալող այդ մշակներուն դիմաց, և իրենց լրագրաց մէջ սիններ կը նուիրեն այդ գեղարուեստի գործիչներուն :

Շատ մը հաստատութեանց և գրագէտներու յորելեանները կը կատարուին այս տարի. և մայիս 2ին Մոսկուայի մէջ հանդիսաւորութեամբ տօնուած է Ա. Մատուրեանի բանահիշագամայ յորելեանը. և աշնան պիտի կատարուի Շիրվանզադէի երեսամեանը :

Ո՞վ է Ա. Մատուրեանը : Մեր տաճկահայ ընթերցողները քիչ կը ճանչնան զինքը ապահով. և լրագիրները իրենց յարգանքը կ'ուղղեն անոր՝ արտասպելով կովկասահայ լրագիրներու յօդուածները՝ որոնց մէջ կարելի է ճանչնալ Մատուրեանը :

Ա. Մատուրեանը մէկն է ամենէն համակրելի ղէմքերէն, որ արդի հայ գրականութեան մէջ փայլուն անուն մ'աւելցնելու համար՝ 1885էն աստին նիւթական անձուկ վիճակով տուած է հայ գրադարանին ընտիր հատորներ, և Վեսելովսկի ծանօթ ուս հայասէր գրագէտը ծանօթացուցած զՄատուրեան ուս գրականութեան մէջ՝ թարգմանելով քանի մը ընտիր քերթուածները² :

Մատուրեան 1865ին ծնած է Զաքարթալայի մէջ, աղքատ հօր զաւակ, և մահը որ եկաւ զինքն որք թողու՝ դեռ ա-

1. L'abate Lourdet վերագրին սակ : Սա (ինչպէս կը տեղեկանայ Յորելի Ուսուցչապետը՝ Յակոբ Ե. Զրպետի քերականութեան Ներածութենէն) յօրեան է

հայերէն Համառօտ քերականութիւն մը որ անտիպ կը մնայ :
2. Տես Մատուրեանի մասին Հ. Ա. Ղազիկեանի :



ւելի խեղճութեան մէջ ձգեց փոքրիկ Մատուրեանը իր ծօրը հետ: Սկզբնական կըրթութիւնը իր ծննդավայրի ծխական դպրոցին մէջ առաւ. յետոյ իր օրուան հացին համար ստիպուեցաւ նիւթական գործերով զբաղիլ, առանց սակայն ձգելու իր գրիչը՝ որ թարգմանն էր իր բանաստեղծ մտքին ու տառապանքին. և ես կարծեմ Պ. Մատուրեան իր տառապալից կեանքին ազդեցութեան ներքեւ զբաժնէ և սա գեղեցիկ և զգայուն «Երթումս»՝ որ բանաստեղծութեանց Բ հատորին սկիզբը դրուած է.

ԿԵԱՆՔ

Ո՛չ, ատելի չես դու, կեանք վշտալից,
 Երբ քո խողովայնոյ, բազմահոգ զրկում
 ճանջելով մարդուն — նաև կարեկից,
 Անկեղծ ընկեր ես նորան պարզեում:

Մանր չէ՛ քո խաչն, երբ մենք կորացած
 Այդ խաչի տակին՝ խուլ հառաչելիս,
 Ունենք մտերիմ, որ մեզ համազգաց,
 Մեզ հետ խնդում է և մեզ հետ լալիս....

Երբ գիտենք, որ կայ գոյութեան կոպում
 Մեզ սիրող մի սիրտ—անձնուրաց ընկեր,
 Որ միշտ պատրաստ է տանջանքի ժամում
 Իւր սիրով սրբել մեր արտասուքներ:

Եւ որպէս անյագ, որպէս համարձակ
 Յառաջ, միշտ յառաջ ձգտում է հոգին,
 Երբ կեանքում, որպէս յուսատու հրեշտակ,
 Ընկերն ընկերին սեղմում է կըրծքին:

Այնտեղ, մըտերմի սիրառատ զգրկում
 Եւ փուշն է — ծաղիկ, և՛ լացը — ծիծաղ.
 Այնտեղ ձըմեռն է զարնան պէս ժպտում,
 Այնտեղ և՛ մահուան համբոյրն է խաղաղ...

Տառապալից կեանքը՝ այ՛ր անուշ է
 Մատուրեանի համար, երբ նա իրեն ընկեր
 և մտերիմ ունի զրիչը...

Եւ ատելի պէտք չէ՛ր ըլլար «կեանք»ը
 բանաստեղծին համար, երբ նա՝ իր ծաղիկ
 հասակին (1884ին) մէջ օրական 40
 կոպէկ կը ստանար ի վարձ իր ծառայութեան:
 Բանաստեղծը՝ այդ ասպարէզին մէջ
 իսկ հաւաքանքի ենթարկուած է միշտ.
 չէ՛ որ շատ մը հարուստներ իրենցմէ հետու
 կը բռնեն խեղացիները և սրամարանողները,
 մանաւանդ արգարախոհները:

Մատուրեան հայ գրականութեան մէջ
 կը մտնայ թէ՛ իրբե բանաստեղծ, և թէ
 իբր թարգմանիչ:

Իրբե ինքնատիպ գրիչ՝ ան շատ սիրուած
 է ուուսաշայրէն, և նոյն գնահատութեան
 պիտի արժանանայ տաճկահայերն՝ եթէ
 ճանչցո՛ւ: Մատուրեանը 1891էն առաջ
 երկցած է իր ժամանակի գրեթէ բոլոր
 զրական թերթերուն մէջ, 1891ին առաջին
 ազգամ երկցաւ իբր բեղուն հեղինակ՝
 իր «Բանաստեղծութիւններ» անուն հատորով,
 որուն մէջ կան թէ՛ իր և թէ՛ իր սիրած
 բանաստեղծներու քերթուածները. Հայնէն,
 Պլեյշեյզէն, Լերմոնդովէն, Ուշանդէն,
 Թովմաս Մուրէն, և այլն:

Մատուրեանը երբ կը խօսի քեզ հետ
 իր քերթուածներով՝ ան ժողովրդական,
 անպաճոյճ բանաստեղծ մը կը թուի, բայց
 միանգամայն տաղանջաւոր, իրմէ հեռու

են ձեւակերպութիւնները. նա իրականութիւնը կ'երգէ, ինչ որ իր կեանքին գծերն են: Ես վախեմ՝ Կատուրեանի քերթուածներուն պարզութիւնը ու բնականութիւնը տաճկահային դատողութեան դիմաց շատ բան կորսնցնել տան. չէ՛ որ տաճկահայը բանաստեղծութիւնը և զրականութիւնը քրտինքով գտնուած բառերուն մէջ, արտաքին ձևին մէջ կը նկատէ: Արեւելեան է այդ դատողութիւնը և արեւելից երգիչները իմաստէն աւելի՛ հանգ րատ կը փընդոնն, որպէս զի արտաքին փայլին մէջ կորստի իրենց մտքին տկարութիւնը: Մըթնուլորտն է ճշմարտութեան դատաւորը. այս դատին մէջ երկու կողմն ալ ուժգնօրէն իրենց ձևը պիտի պաշտպանեն, և Կատուրեանն ալ եթէ փորձէ պոլսական մթնուլորտին տակ ապրիլ, թերևս, շատ բնական է, ինքն ալ վարակուի, ինչպէս դժբախտաբար վարակուի սկսան ան շատ մը արտասահմանի մէջ շնչող զրագէտները՝ երբ հոն վերադարձան:

Կատուրեան 1898ին հրատարակեց երկրորդ հատորը իր 1892—1898ի Բաևաստեղծութիւններու. — Սմբատ Շահապիգանի նրանսամենայ Յոքեյեանը (1882). — Երեսուս և հիկո տարի (տպ. 1888ին), նորէն իր ուսուցչին Սմ. Շահապիգի գործունէութիւնն. — Գրիխ հանաքներ (1901), հաւաքածոյ մը ինքնագիր և թարգմանածոյ զուարթ ոտանաւորներու:

Կատուրեան իբրև թարգմանիչ՝ տուած է արձակ և ոտանաւոր հատորներ. և վերջերս հրատարակեց երկու հատոր Ռոստրանաստեղծների տիտղոսին տակ, Պուշկինէն, Լեմոնտովէն ևն, ընտիր կտորներով ծաղկաքաղ մը ձևացնելով: Պ. Լէօն իր Ռոստանայ գրականաբանը հատորին մէջ (էջ 75) կը գրէ. «Պ. Կատուրեանը մեր նոր բանաստեղծների մէջ ամենահամակրելին է իր տաղանդով... Պ. Կատուրեանի ամենամեծ առաւելութիւնն այն է, որ երգում է առանց ինքն իրան բռնազատելու, հարթ ու ողորկ և պարզ, շատ պարզ լեզուով»:

Եւ յորեւանը՝ որ կու գայ հանդիսի

մը մէջ ամփոփելու բանաստեղծի մը ԲԸ-սանահինգ տարուան մտային արտադրութիւնները, գործունէութիւնը հայ գրականութեան մէջ, կը բաղձանք և կը մաղթենք՝ որ միթարութեան հետ տայ Կատուրեանի նաև եռանդ՝ ուրիշ քսանհինգ տարուան մը մէջ կրկնելու իր արդիւնքը՝ արժանավայել ոսկեղէն յորեւանի մը:

Հ. Մ. ՊՈՏՈՒՆՅԱՆ

Գ Ե Ղ Ո Ւ Ն Ի Ն ❀ ❀ ❀ ❀
❀ ❀ Ե Ի Ր. Մ Ս. Մ Ո Ւ Լ Ի Ն Մ Է Ձ

ԲԱՅԱՌԻԿ ԹԻՒ ՄԸ ԱՏԱՆԱՅԻ ԶՈՂԵՐՈՒՆ

Անտարակոյս մեր ընթերցողները կը յիշեն Ատանայի ահաբի ջարդերը, որուն մէջ քսան հազարէ աւելի Հայ անմեղներ զոհ գացին Միւսուլման հրոսակներու ամբարիշտ անգթութեան, որոնք զրգուած և առաջնորդուած էին ջարդին, կողոպտսին և անլուր վայրագութիւններուն, այն վարչութեան խրախուսանքով՝ որ այլ ևս պիտի չի կարենար գործել այսպիսի անգութ գործեր:

Ատանայի դէպքերը՝ արդարացի կերպով կոչուեցան քսաներորդ դարու մեծ եղեռնը. բարեբաղդաբար վերջին արեան հոսուսն էր՝ որ իր ազբերակն Ապտիւլ Համիտին ըղբղին մէջն ունէր: Այդ դէպքերէն Հայ ժողովրդին ունեցած խեղճութիւնները տխուր գոյներով նկարագրուած են Ատանայի թերզեան Եպիսկոպոսին նամակին մէջ: Հայ ազգը եղբայրական բնական զգացումով մղուած՝ ջանաց բոլոր ուժովն ջարդերէն ողջ մնացածներուն օգնութեան հասնիլ. բայց որովհետև ամուրջիլից ցաւը ահաւոր էր, և չափազանց փոքր կարևոր միջոցները անոր դիմազրահելու, Հայ ազգը չի վարանեցաւ կոչ մ'ընելու մարդկային համերաշխութեան զգացմունքին, ամէն միջոց ի գործ դրուեցաւ նպաստներ հաւաքելու:

Ս. Ղազարու Հայ հաստատութիւնը այս նպատակով հրատարակեց հիմնալի բա-